

նորաձուլ արձանի վրալից։ Այդպէս տօնախմբութիւնները շարունակուում են ութ օր՝ ամենամեծ տպաւորութիւն թողնելով թէ չափահասների և թէ մատաղ սերնդի սրտերի վերալ. ալդ օրերն անմոռաց կըմնան ֆրանսիացիների համար։

Ահա այսպէս են գնահատում մեծ աղգերն իրենց մեծ զաւակներին։

Ֆրանսիական մեծ բանաստեղծի գրուածքներն և ուղղութիւնն ի միջի ալլոց աղղեցութիւն են ունեցել նաև մեր աղգի նոր գրականութեան վերալ, նամանաւանդ Տաճկահայոց։ Մեր քանքարաւոր բանաստեղծներ—Գուրեանի և Պէշիկթաշլեանի վերալ մեծ ներգործութիւն են ունեցել Հիւզօի գրուածքները։ Մեր բարձրաստիճան հոգևորական Խորէն-Նարբէէն անձնական լարաբերութիւն ունէր Հիւզօի հետ։

Վիկտօր Հիւզօի նշանաւոր երկերից տաճկահայերը թարգմանել են «Յուառները», (Գր. Չիլինգիրեանի, Զմիւռնիա, 1868 թ.) «Նօտր-Դամ փարիզի» (Տ. Թերզեանի, Երկրորդ թարգ. Մ. Նուպարեանի, Զմիւռնիա, 1871 թ.), «Անջելո» (Զմիւռնիա 1863 թ.), «Բրիստօս ի Վատիկան» (Հեքիմեանի, Կ. Պօլիս, 1871 թ.) և ալն։ Նոյնպէս թարգմանուած են բանաստեղծութիւններից շատերը։ Իսկ Ռուսահայերս ոչ մի նշանաւոր երկ չենք թարգմանել Հիւզօից, դուցէ ալն պատճառով, որ առհասարակ ֆրանսերէնից շատ բան չենք թարգմանել և մեր թարգմանական գրականութիւնն ըստ մեծի մասին ուսերէնից և գերմաներէնից է կաղմակերպուել։

ՄԱՅՐ ՄԱՋՏՈՑԻ ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ԱՆՀՐԱԺԵՋՏՈՒԹԻՒՆԸ

Վերջին ժամանակ մեր մամուլի մէջ շարունակ բողոքներ է լայտնուում, թէ շատ տեղերում աղաւաղուել է Հայաստանեայց ս. եկեղեցու ծէսերի ու արարողութեանց կատարման ձևերը, խանդարուած է հնաւանդ կղանակը և նորմոծութիւնները սկսել են մոռտ գործել մեր եկեղեցիներում։ Ալս մասին մի ընդարձակ տեսութիւն մենք տպել ենք «Լուսմալի առաջին տարիների համարներում։

Ալդ աղաւաղութեանց առաջն առնելու գլխաւոր միջոցը մալր Մաշտօցի տարածելն է բոլոր եկեղեցիներում և քահանաների մէջ, որովհետև ալդ մատենումն են ամբողջ-

ուած Հալ եկեղեցու խորհուրդները և ծէսերը կատարման բոլոր կարգերը: Ջարմանալի է սակայն, որ այդ խիստ ահհրա-
ժեշտ և շատ կողմերից ուսումնասիրելի մատեանը տպագրու-
ուել է միայն մի անգամ և այն՝ Կ. Պօլսում և այդ տպագրու-
թիւնն այնքան հաղուադիւտ է այժմ, որ գրչադրի արժէք ու-
նի մեր կողմերը:

Մենք լիշում ենք, որ 1888—89 թուերին ի Տէր հան-
դուցեալ Տ. Մակար Կաթողիկոսի հրամանով ս. Էջմիածնում մի
մասնաժողով կազմուեց ձեռնհաս անձերից, Տ. Արիստակէս
արքեպիսկոպոս Դաւթեանի նախագահութեամբ, որ պիտի
կազմէր Մայր Մաշտոցի տպելու օրինակը՝ Մայր Աթոռի հա-
րուստ մատենադարանում գտնուած բազմաթիւ գրչադրերի
համեմատութեամբ: Մասնաժողովը կատարեց իւր գործը և իւր
աշխատութեան արդիւնքը ներկայացրեց հանդուցեալ կաթո-
ղիկոսին:

Տ. Մակար կաթողիկոսը այդ կազմած օրինակը ուղար-
կելով Կ. Պօլիս այն ժամանակուայ պատրիարք Յարութիւն
Արքեպիսկոպոսին՝ պատուիրեց, որ այնտեղ Կրօնական Ժողո-
վի քննութեան ենթարկէ այն և նորա կարծիքի հետ ղեկուց-
ուի իրեն ի տնօրէնութիւն: Բայց որքան դիտենք, Մայր
Մաշտոցի այդ օրինակը մնաց Պօլիս և մինչև այժմ չեւ չդար-
ձուեց ս. Էջմիածին, դուցէ հէնց Յարութիւն պատրիարքի Ե-
րուսաղէմ փոխադրուելու և Մակար կաթողիկոսի մահուան
պատճառով:

Ժամանակ է կարծում ենք ամեն մի քահանայի ձեռքը տալ
Մայր Մաշտոցը և պահանջել նորա ճիշդ գործադրութիւնը, ո-
րով կվերանան անշուշտ մեր եկեղեցական արարողութիւն-
ների մէջ մտած բոլոր ղեղծումներն ու անկարգութիւնները:

Յանկալի է, որ Կ. Պօլսի արդի Պատրիարք ամենապա-
տիւ Մաղաքիա արքեպիսկոպոսը, հանելով փոշիների տա-
կից լրացնէ այդ ձեռագիր օրինակը իւր բազմամուտ ծանո-
թութիւններով և ներկայացնէ ուր հարկն է:

ՍԱՆԱՍՐԵԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՓՈԽԱԳՐՈՒԹԻՒՆԸ ԽԱՐ-

ՔԵՐԴ

Կ. Պօլսի Էթիզանդիօն ամենօրեայ լրագրի անցեալ ֆե-